

14. ՄԻՆՈՏԱՎՐՈՍԻ ԼԱՔԻՐԻՆԹՈՍԸ

Հին հույների դիցաբանական պատկերացումներում պատմվում է, որ Կնոսոսի (Կրետե կղզում) առասպելական թագավոր Մինոսը (Minos) ճարտարապետ Դեդալոսին պատվիրում է կառուցել ստորգետնյա բազմազան գետնուղիներով և ահռելի մեծությամբ լաբիրինթոս, որտեղ բանտարկում է Մինոտավրոս հրեշին:

Նախ՝ Մինոսը Ջևսի ու Եվրոպեի որդին էր՝ իմաստուն և արդարադատ մի թագավոր, որ հայտնի էր իր քաջագործություններով: Նրա մահը կապվում է ճարտարապետ Դեդալոսի մասին առասպելի հետ: Դեդալոսը Կրետե կղզուց փախչելուց հետո ապաստանում է Սիրակուզայի թագավորի մոտ: Երբ Մինոսը հասնում է այնտեղ և պահանջում ճարտարապետին, նրան սպանում են թագավորի դուստրերը: Մահից հետո Մինոսը անդրշիրիմյան աշխարհում դառնում է մեռյալների դատավոր և պատիժներ է սահմանում մեղավորների որդիներին:

Վերադառնանք **Մինոտավրոսին**:

Ըստ առասպելի, նա ունեցել է մարդու մարմին և ցուլի գլուխ. նա ծնվել է Մինոս թագավորի կնոջ և Պոսեյդոնի ուղարկած ցուլի անբնական խառնակումից: Մինոտավրոսին շրջապատից մեկուսացնելու և մարդկանցից թաքցնելու համար Մինոս թագավորը նրան «բանտարկում է» Դեդալոսի կառուցած լաբիրինթոսում: Նրան կերակրում են հանցագործների և մահապարտների մարմիններով, ինչպես նաև Աթենքից որպես տուրք ուղարկվող պատանիներով և աղջիկներով (յոթական):

Մինոտավրոսին լաբիրինթոսում սպանում է Թեսևս դյուցազնը: Թեսևսը հայտնվում է Կրետեում՝ որպես Մինոտավրոսին մատուցվող հերթական զոհ: Ըստ առասպելի, լաբիրինթոսում նա հրեշին սպանում է բռունցքի հարվածով և լաբիրինթոսից դուրս է գալիս Մինոտավրոսի քրոջ օգնությամբ. վերջինս դյուցազնին տալիս է թելի կծիկի ծայրը, որից բռնելով՝ Թեսևսը դուրս է գալիս ստորգետնյա խճճված ուղիներից:

Մինոտավրոսի մասին առասպելը վկայում է՝ ինչ-որ ժամանակ գոյություն է ունեցել մարդկային զոհաբերությունների յուրահատուկ ծիսակարգ՝ մարդկանց չար ոգիներից և երկնային ուժերից զերծ պահելու համար:

Լեզուներում Մինոտավրոսի անունը պատմաբանի արժեք ունի, փոխաբերական իմաստով այն նշանակում է «խառնածին հրեշ, կեռ մարդ՝ կես գազան, մարդակեր»:

Μινώταυρος-ը հունարենից նախ անցել է լատիներենին՝ Minotaurus, այնուհետև՝ եվրոպական լեզուներին, հմմտ. ֆրանս. Minotore, գերմ. Minotaur//Minotaurus, անգլ. Minotaur, ռուս. Минотавр, հայ. **Մինոտավրոս** և այլն:

Եթե **Μινώταυρος**-ի առաջին բաղադրիչը Կնոսոսի թագավորի անունն է՝ **Μινώς**, ապա երկրորդը, անկասկած, «հրեշ, ցուլ» իմաստով **ταυρος** բառն է:

Հունարենում **ταυρος** բաղադրիչը հանդիպում է առասպելական այնպիսի էակների անվանումների մեջ, որոնք ներկայանում են իբրև կիսամարդ-կիսացուլ արարածներ:

Այդ արարածները հունական առասպելաբանության մեջ կոչվում են **կենտավրոսներ**. **Κενταυροι** (հզվդ. **Κενταυρος** – բառացի՝ «ցուլերին սպանող»): Ըստ ավանդույթների կենտավրոսներն ունեցել են վայրենի բարքեր և հակում գինու հանդեպ:

Կենտավրոս(ներ)ի վերաբերյալ արձագանք գտնում ենք նաև Մովսես Խորենացու «Պատմության» մեջ: Պատմահայրը, խոսելով Բյուրասպի Աժդահակի մասին, գրում է. «Ես այս Բյուրասպի իսկական անունը ճանաչում եմ Կենտավրոս Պյուտիդա, որ գտել եմ քաղղեական մատյանում»:

Կենտավրոսների մասին պատումներ կան անտիկ գրականության մեջ (Հոմերոս, Սոֆոկլես, Եվրիպիդես, Օվիդիոս և ուրիշներ), կենտավրոսներին անդրադարձել են նաև անտիկ շրջանի քանդակագործներն ու նկարիչները:

Հունարեն **Κενταυρος**-ն էլ նախապես անցել է լատիներենին՝ Centaurus, ապա՝ եվրոպական լեզուներին. հմմտ. ֆրանս. centaure (մարդածի), գերմ. Kentaur//Zentaur, անգլ. centaur, ռուս. кентавр//центавр, հայ. **Կենտավրոս** և այլն:

Նկատենք նաև, որ երկնքի հարավային կիսագնդում կա մի համաստեղություն, որ կոչվում է **Կենտավրոսի** անունով:

Ինչևէ: Մինոտավրոսը և կենտավրոս(ներ)ը արտաքուստ կապ ունեն. Մինոտավրոսը լաբիրինթոսում խժոռում է զոհերին, իսկ կենտավրոսները զբաղվում են գինարբուքով՝ ցուցաբերելով վայրենի բարք: Սա դեռ քիչ է, խմբով բարձրացան երկինք և դարձան... համաստեղություն:

15. ԲԱՔՈՍՈՒՇԻՆԵՐԸ

Լեզուների դարձվածանի մեջ կան այնպիսի կայուն կապակցություններ, որոնց բաղադրիչներից մեկը հատուկ անուն է կամ անձնանուն, ինչպես՝ **Հուդայի համբույր, Աքիլեսյան գարշապար, Դամոկլյան սուր, Պրոկրուստյան մահիճ, Հոմերյան քրքիջ, Դանայան տակառ, Տրոյական ձի** և այլն:

Հասկանալի է՝ կապակցությունները հայերենին (և այլ լեզուների) անցել են «Աստվածաշնչից» կամ եվրոպական գրականությունից: Այս կարգի դարձվածքների շարքին են դասվում նաև **բաքոսի երկրպագու, բաքոսին տուրք տալ, բաքոսին ուխտ գնալ** կապակցությունները, որոնց իմաստը (իմաստները) հնարավոր չէ մեկնաբանել առանց **Բաքոս** հատկանվան իմաստի «ճանաչման»: Մանավանդ որ **Բաքոս** անվանման հետ է առնչվում մեզ հետաքրքրող **բաքոսուհիներ** բառը:

Նկատենք, որ **Բաքոս** հատկանուն բաղադրիչով կապակցություններն արտահայտում են «գինարբուքի, կերուխումի, խրախճանքի» հետ կապված հասկացություններ: Հմտ. բաքոսի երկրպագու «կերուխում սիրող», բաքոսին տուրք տալ «կերուխում անել», բաքոսին ուխտ գնալ «հարբել, գինովանալ» և այլն:

Այդ դեպքում, ո՞վ է **Բաքոսը**, և ո՞վքե՞ր են **բաքոսուհիները**:

Զվարճանքի այս սիրահարի հետքերը մեզ տանում են հունական դիցաբանության տարածքները կամ հին հույների ամենադից մեհյանը:

Բաքոսը նույն ինքը՝ Դիոնիսիոսը, հին հույների դիցաբանական պատկերացումներում բուսականության աստվածն է, խաղողագործության և գինեգործության հովանավորն ու պաշտպանը: Բաքոս-Դիոնիսիոսը Հին Հունաստանի ամենից շատ ժողովրդայնություն վայելող աստվածներից մեկն է՝ Զևսի և Սեմելեի որդին: Իր շրջագայությունների ընթացքում Դիոնիսիոսն անցել է Հունաստանով, Սիրիայով, Ասիայով, Հնդկաստանով և Թրակիայի վրայով վերադարձել Եվրոպա: Իր ուղևորության ընթացքում նա մարդկանց սովորեցրել է գինեգործության արհեստը և հրաշքներ կատարել՝ մարդկանց հայտնվելով նոխազի, եզան, առյուծի և հովազի տեսքով: Հողի տակից կարողացել է բխեցնել գինու, մեղրի և կաթի աղբյուրներ: Նրա կազմակերպած խրախճանքներն անցնում էին մեծ շքախմբով ու մարդկային գինովցած թափորով: Երթին մասնակցում էին կանայք՝ բաղեղից պսակներ հյուսած և վայրի գազանների մորթիներ հագած:

Դիոնիսիոսին ուղեկցող կանայք կոչվում էին **բաքսուսիներ**:
Երբ Դիոնիսիոսի պաշտամունքը Հունաստանից անցավ Հռոմ,
Դիոնիսիոսին մեծարեցին **Բաքս** անունով:

Լեզուներում Բաքս անունը տարածվեց լատիներենով՝ Bacchus, որ «գինեգործության և գինու աստված» իմաստից բացի նշանակում է նաև՝ 1. գինի (հմմտ. madeant pocula Baccho – թող լցվեն գինու գավաթները), 2. խաղող (հմմտ. apertos Bacchus amat colles – խաղողը սիրում է բաց բլրակներ):

Իբրև դիցաբանական անվանում լատ. Bacchus-ը պահպանվել է Եվրոպական մի շարք լեզուներում. հմմտ. ֆրանս. Baccus, գերմ. Bacchus, անգլ. Bacchus, ռուս. Бахус, հայ. **Բաքս**:

Լատինական Bacchus-ը հունական Βακχος անվան ձևափոխումն է. նրա պատվին տրվող տոնախմբությունը կոչվում էր **բակխանալիա**, հմմտ. ֆրանս. bacchanale, գերմ. Bacchanal, անգլ. bacchanalian, ռուս. вакханалия:

Հայերենում **Վակխանալիա** ձևը միջնորդավորված փոխառություն է ռուսերենից՝ ավելի նոր ժամանակներում:

Բաքսի քրմուհին կոչվում էր **բաքսուսի**, (որոնք, ինչպես նշեցինք, ուղեկցում էին Բաքսի տոնակատարությունը). հմմտ. ֆրանս. baccante, անգլ. Bacchant(e), գերմ. Bacchantin, ռուս. вакханка և այլն:

Անտիկ գրականության և արվեստի մեջ անդրադարձել են Բաքսին և բաքսուսիներին. այդ կերպարներին հանդիպում ենք Հռոմեյան վիպերգության և Եվրիպիդեսի «Բաքսուսիներ» ողբերգության մեջ: Նոր ժամանակներում Բաքսի և նրան ուղեկցող քրմուհիների թեման մշակվել է նկարչության մեջ (Ռուբենս և Պուսսեն), հայտնի են Միքելանջելոյի և Տորվալդսենի կերտած Դիոնիսիոս-Բաքսի արձանները, երաժշտության մեջ Մասնեի («Դիոնիս») և Դեբյուսիի («Դիոնիս»), Դորգոմիժսկու («Բաքսի հաղթանակը») օպերաները:

Ինչևէ: Հունական դիցաբանության մեջ գինեգործության և խրախմանքի աստվածությունը Դիոնիսիոս-Բաքսն էր, իսկ նրա պատվին կազմակերպված օրգիաներին շուք ու շքեղություն էին հաղորդում գինովցած քրմուհիները՝ շեփորահարելով սիրո և վայելքի անանցանելի խորհուրդը:

16. ԱՏԼԱՆՏԻ ԴՈՒՍՏՐԵՐԸ

Հունական դիցաբանության երևելի դեմքերից մեկին՝ Ատլանտին (կամ Ատլաս) մենք հանդիպել ենք մեր գրույցների ընթացքում, երբ խոսում էինք աշխարհագրական **ատլասի** (բառանվանման) ծագման մասին:

Պարզվում է՝ նույն Ատլանտը, ավելի շուտ նրա դուստրերը՝ պլեադները, իրենց որոշակի հետքը թողել են հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում:

Վաղուց ի վեր լեզուներում գործածվում է **պլեադա** (կամ **պլեադ**) բառը, որ նշանակում է «գիտության՝ արվեստի՝ գրականության և այլ բնագավառներում միևնույն ժամանակ հանդես եկած նշանավոր գործիչների խումբ»:

Հմտ. ռուս. плеяда, ֆրանս. pleiade, գերմ. Plejade, անգլ. pleiad, իտալ. pleiade, իսպ. **pléyade** և այլն:

Հարց է ծագում, սակայն, ինչ կապ ունեն Ատլանտի գեղեցկուհի դուստրերը գիտության և արվեստի նշանավոր գործիչների հետ:

Դրա համար պետք է պարզել Ատլանտի դուստրերի հավաքական անվանման նախնական նշանակությունը և հետևելով նրա կրած իմաստային զարգացումներին՝ բացահայտել նրա իմաստային ընդլայնումն ու ներկա նշանակությունները:

Քանի որ Ատլանտը (Ատլասը) և նրա դուստրերը հիշատակվում են հին հունական դիցաբանության մեջ, հետևաբար նրա դուստրերի հավաքական անվանումը հայտնի է հին հունարենով: Այսպես, մայր լեզվում Ատլանտի և Պլեյոնեի յոթ դուստրերը կոչվում էին **Սլեյադես**, լատ. Pleiades:

Ըստ դիցաբանության, Ձևսը Ատլանտի յոթ դուստրերին փոխադրեց երկինք՝ իբրև աստղեր:

Հունարենում և լատիներենում pleiades բառը ձեռք բերեց տերմինային արժեք՝ նշանակելով «Յուլի համաստեղության յոթ աստղերը»: Նկատի ունենալով աստղերի պայծառությունը և նրանց ճառագած շլացուցիչ լույսը՝ pleiades անունով կոչեցին Ալեքսանդրյան դպրոցի ողբերգակներին:

Ժամանակի ընթացքում Ատլանտի դուստրերը մոռացության մատնվեցին՝ մնալով սոսկ դիցաբանական կերպարներ, սակայն նրանց հավաքական անվանումը լեզուներում երկու կարևոր նշանակություն և իմաստ արձանագրեց՝ «համաստեղություն» և «արվեստի ու գիտության նշանավոր գործիչների խումբ»:

Եվ պատահական չէ, որ հաճախ գիտության նշանավոր գործիչներին կամ նրանց խմբին անվանում են **աստղաբույլ**:

Հիմա, երբ գործածում ենք **գիտնականների պլեադա, լեզվաբանների պլեադա, ֆիզիկների պլեադա, մաթեմատիկների պլեադա, արվեստագետների պլեադա** և այլ կարգի բառակապակցություններ, չենք էլ մտածում, որ պլեադա-ն նախապես նշանակել է Պլեյոնեի յոթ դուստրերին, և որ նրանք ի սկզբանե եղել են երկրում, հետո դարձել են համաստեղության մաս... երկնքում:

Թերևս արժե մտածել, որ գիտության և արվեստի նշանավոր գործիչները այնքան էլ երկրային ծնունդ չեն, և որ նրանք, իրոք, երկնային ծնունդ են՝ օժտված բացառիկ և գերբնական մտավոր ներուժով:

Այնպես որ, **պլեյադ**-ները նախնական և ներկա իմաստներով միմյանց հանդիպում են... երկնքում: